«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ»

Առարկան՝ Մաթեմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Նիկողոսյան Մարինե

Ուսումնական հաստատություն՝ Աքորու միջնակարգ դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

1. «Ընտանիք» սոցիալական ինստիտուտի հոգեբանությունը, նպատակը և խնդիրները 3

2. Ընտանիքի կառուցվածքը և տեսակները..... 4

3. Ընտանիքի հիմնական գործառույթները 7

4. Ընտանիքի դերը երեխայի անձի ձևավորման և զարգացման գործընթացներում..... 10

5. Ընտանեկան կոնֆլիկտների տեսակները և դրանց առաջացման պատճառները 12

6. Ընտանեկան կոնֆլիկտների բացասական հետևանքները 20

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 23

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<u>Թեմայի արդիականությունը.</u> Հաճախակի կոնֆլիկտներն ազդում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա, քայքայում հարաբերությունները, ընտանիքի անդամների մեջ առաջացնում սթրես, լարվածություն, տհաճ հոգեվիճակներ: Ընտանեկան կոնֆլիկտների արդյունքում առաջին հերթին տուժում են երեխաները, որոնք ունենում են անձնային զարգացման խեղաթյուրումներ, վարքի խանգարումներ, որն էլ խոչընդոտում է երեխայի սոցիալականացումը:

<u>Աշխատանքի նպատակը.</u> Աշխատանքի նպատակն է ուսումնասիրելով ընտանեկան կոնֆլիկտների տեսակները՝ վեր հանել դրանց առաջացման պատճառները և բացասական հետևանքները երեխաների սոցիալականացման գործընթացում: Նպատակից բխում են հետևյալ ***<u>խնդիրները</u>*** ՝

1. Ուսումնասիրել «ընտանիք» սոցիալական ինստիտուտը՝ հոգեբանությունը, նպատակը, կառուցվածը, տեսակներն ու գործառույթները:
2. Ուսումնասիրել ընտանեկան կոնֆլիկտների տեսակները և դրանց առաջացման պատճառները,
3. Բացահայտել ընտանեկան կոնֆլիկտների բացասական հետևանքները երեխայի սոցիալականացման գործընթացում:

<u>Աշխատանքի ուսումնասիրության առարկան</u>՝ ընտանեկան կոնֆլիկտներն են՝ որպես երեխայի սոցիալականացման խոչընդոտ:

1 «Ընտանիք» սոցիալական ինստիտուտի հոգեբանությունը, նպատակը և խնդիրները

Ընտանիքը որպես սոցիալական ինսիտուտ համարվում է մարդկանց փոխհարաբերությունների կայուն ձև: Այստեղ տեղի է ունենում երեխայի սոցիալականացման առաջնային գործընթացը: Ընտանիքում երեխան սովորում է սիրել, հավատալ, ձևավորվում են բնավորության հիմնական գծերը: Իսկական ընտանիքը ծնվում է սիրուց և մարդուն տալիս է երջանկություն: Ծնողները երեխաներին սիրել կսովորեցնեն միայն այն դեպքում, եթե իրենք են սիրում միմյանց: Սիրով և երջանկությամբ ողողված ընտանիքը առողջ հոգու, հավասարակշռված բնավորության, ստեղծագործելու կարողության բացահայտման դպրոց է: Ինչպես նշել է Է.Դյուրկհեյմը՝ «Ընտանիք սոցիալական ինսիտուտների հիմնական նպատակը տիրող մշակութային արժեքների փոխանցումն է»[1] , որով երեխան ոչ միայն ձևավորվում է ու զարգանում, այլև ձեռք է բերում անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ, հմտություններ:

Ընտանիքը սոցիալ-հոգեբանական խմբավորում է, անդամների՝ միմյանց հետ կապված ամուսնական կամ ազգակցական կապերով, կենցաղի ընդհանրությամբ և բարոյական փոխադարձ պատասխանատվությամբ, որն ապահովում է հասարակության առաջնային պահանջմունքը՝ սերունդների ֆիզիկական և հոգևոր վերարտադրողականությունը: Ընտանիքը, որպես սոցիալական ինսիտուտ, կարևոր բաղադրիչ է համարվում անձի ձևավորման և զարգացման գործընթացում: Այն հասարակության հիմնական միավորն է, որի միջոցով տեղի է ունենում բնակչության վերարտադրությունը: Այստեղ կարգավորվում է երեխաների ծնունդը, լուծվում են նրանց հետ կապված բազմաթիվ խնդիրներ, ապահովում է երեխաների անձի ձևավորումը և զարգացումը ինչպես նաև պայմաններ են ստեղծվում ինչպես երեխաների, այնպես էլ ընտանիքի բոլոր անդամների սննդի, առողջության պահպանման և կյանքի տևողության աճի համար:

Այսպիսով, ժամանակակից ընտանիքն իր առաքելությունը պետք է տեսնի ոչ միայն երեխաներին բարոյական, համամարդկային, հումանիստական ոգով անձի ձևավորման մեջ, այլև, դաստիարակի այնպիսի անձնավորություն, որը կարող է իր ներդրումն ունենալ

[1] Ա.Հ. Սարգսյան, Մշակույթի տեսություն, Երևան, 2003, էջ 29

հասարակության զարգացման համար։ Ընտանիքում արդյունավետ դաստիարակության կարևոր պայման է ընտանիքի բոլոր անդամների ընդգրկվածության ապահովումը ընտանեկան հիմնախնդիրների լուծման գործում, այսինքն՝ ծնողների, նրանց և երեխաների համագործակցությունը, գործունեության համատեղ պլանավորումը, իրականացումը և արդյունքների գնահատումը։

2. Ընտանիքի կառուցվածքը և տեսակները

Ընտանիքի կառուցվածքը ներառում է ընտանիքի քանակը և կազմը, ինչպես նաև նրա անդամների միջև հարաբերությունների ամբողջությունը: Յուրաքանչյուր ընտանիք կազմված է անդամներից, ինչպես նաև նրանց միջև գոյություն ունեցող կապերից ու փախհարաբերություններից։ Այդ ամբողջությունն էլ հանդիսանում է ընտանիքի կառուցվածքը, որը կարող է լինել աստիճանակարգային։ Ընտանիքի յուրաքանչյուր անդամ ժամանակի ընթացքում ձեռք է բերում իր կարգավիճակը և համապատասխան դերերը։ Այստեղ կա լիդեր (երբեմն, մեծ ընտանիքներում, մեկից ավելի), կան ենթականեր (կատարողներ): Ընտանիքի ներսում կարելի է հանդիպել հարաբերուրությունների երկու հիմնական ձևի՝ ամուսնական (ամուսնու և կնոջ միջև) և ազգակցական (ծնողների և երեխաների, երեխաների, հարազատների միջև):

Կարելի է առանձնացնել «ընտանիք» սոցիալական ինստիտուտի հետևյալ հիմնական տեսակներ՝ միջուկային, ընդլայնված, հավաք, «քաղաքացիական կամ փաստական ամուսնություններ», դեմոկրատական կամ ժողովրդավար կամ էգալիտար, ավտորիտար, բազմազավակ, անզավակ ընտանիքներ և այլն։[2]

[2] https://www.doctors.am/yntaniqi-tesaknery

Գծապատկեր 1Ժ



1 Միջուկային ընտանիք. Միջուկային ընտանիքները կազմված են ծնողներից և նրանցից սերված զավակներից: Այսպիսի ընտանիքներում հարաբերությունները հիմնականում սերտ են և անմիջական: Այս տեսակին բնորոշ է փոխադարձ հարգանքն ու որոշումների ընդհանրությունը: Մեծ ընտանիքների բաժանումը չի կարելի բացատրել միայն նյութական և բնակարանային հարմարարության առկայությամբ:

2 Ընդլայնված ընտանիք. Ընդլայնված ընտանիք համարվում է ընտանիքի այն տեսակը, որտեղ բացի միջուկային ընտանիքից ներառվում են նաև պապն ու տատը և այլ հարազատներ: Նման ընտանիքները Հայաստանում մեծ թիվ են կազմում: Այս ընտանիքներում ավագ սերունդն իր մեծ և նշանակալից ազդեցությունն է ունենում ընտանեկան կյանքին: Խնամելով և դաստիարակելով թոռներին, անմիջական օժանդակություն ցուցաբերելով տնտեսությունը վարելու գործին՝ մեծահասակները հնարավորություն են տալիս ընտանիքի երիտասարդ անդամներին անմիջական մասնակցություն ցուցաբերել հասարակական գործունեությանը՝ նպատակ ունենալով ամրապնդել և կայունացնել ընտանիքը:

3 Հավաք ընտանիք Հավաք ընտանիքն այն տեսակն է, երբ ընտանիքի բոլոր անդամներն ապրում են միասին որոշակի սահմանազատված տեղում՝ օրինակ 1 մեկ բնակարանում: Ընդ որում՝ հավաք ընտանիքը կարող է լինել և՛ նուկլեար, և՛ ընդլայնված:

4 Քաղաքացիական կամ փաստական ամուսնություններ. Այսօր կարելի է հանդիպել նաև այնպիսի ընտանիքներ, որտեղ զույգերն ապրում են համատեղ կյանքով, տնտեսության

ընդհանրությամբ, սակայն որպես ամուսնական զույգ իրավաբանորեն գրանցված չեն։ Վերոհիշյալ ընտանիքներին անվանում են «քաղաքացիական կամ փաստական ամուսնություններ»։ Հոգեբանության մեջ այս տեսակը կոչվում է «միջանկյալ ընտանիքներ», որոնք ցանկացած պահին կարող են կազմալուծվել կամ վավերացվել փաստաթղտերով։

3 Ընտանիքի հիմնական գործառույթները

Խոսելով ընտանիքի տեսակների և նրա՝ որպես հասարակության ամբողջականությունն ապահովող հիմնական կառույցի կայունության ու ամրապնդման մասին՝ չենք կարող չանդրադառնալ նաև նրա գործառույթներին, որոնք խիստ կարևոր են և միմյանց հետ փոխկապակցված: Ընտանիքի գործառույթների մեջ նկատի է առնվում ընտանիքի առանձին անդամների կամ ընտանեկան կոլեկտիվի գործունեության ուղղվածությունը՝ արտացոլելով ընտանիքի սոցիալական դերն ու էությունը: Ընտանիքի գործառույթների վրա ազդում են մի շարք գործոններ՝ կապված հասարակական պահանջմունքների, տնտեսական օրենքների և բարոյական նորմերի հետ: Հետևաբար մարդկության զարգացման ընթացքում վերջիններս փոփոխվել են, երևան են եկել նորերը, փոփոխության են ենթարկվել նախորդները: Ընտանեկան գործառույթները լինում են առաջնային, հիմնական և երկրորդական: Հիմնական գործառույթները ներկայացված են ընտանիքի զարգացման բոլոր փուլերում, իսկ երկրորդական գործառույթների դերը տարբեր պատմական ժամանակաշրջաններում ավելացել կամ նվազել է:[3]

Այսպիսով, կարելի է առանձնացնել ընտանիքի հետևյալ հիմնական գործառույթները՝ պաշտպանական, հուզական, տնտեսական, հաղորդակցական (կոմունիկացիոն), կարգավորող, փոխօգնող, վերարտադրողական, տնտեսական, սոցիալական, դաստիարակչական և այլ:[4]

Ստորև ներկայացված են այն գործառույթները, որոնք առավելապես վերաբերում են երեխայի դաստիարակության և զարգացման գործընթացներին:

---

[3] С. Д. Лаптенок, Мораль и семья. Минск, 1967

[4] Վ.Խ Միրզոյան, Ընտանեկան կոնֆլիկտների տեսակները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ձևավորման վրա, Երևան, 2014, էջ 45

Գծապատկեր 2Ժ



Վերարտադրողական գործառույթ. Վերարտադրողական գործառույթը համարվում է ընտանիքի առաջնային գործառույթներից մեկը: Այն ապահովում է նոր սերնդի վերարտադրությունը, մարդկային ցեղի շարունակականություն, որը անհրաժեշտ է ոչ միայն ներկայի, այլև ապագայի կերտման համար: Ազգի բազմացման ու հարատևման համար կարևորվում է երկու և ավելի երեխաների թվի առկայությունը: Գիտական, մանկավարժական շատ դիտարկումներ ցույց են տալիս, որ ընտանիքում շատ երեխաների առկայությունը նպաստում է երեխաների մեջ դաստիարակել այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ հոգատարությունը, նվիրվածությունը, փոխօգնությունը, կամեցողությունը և այլն:

Տնտեսական գործառույթ. «Ընտանիք» սոցիալական ինստիտուտի հաջորդ կարևորագույն գործառույթն է տնտեսական գործառույթը: Տնտեսական գործառույթը ներառում է հետևյալ հիմնական բաղադրիչները. մասնակցություն սոցիալական արտադրությանը, տնային տնտեսություն, ընտանիքի բյուջեի ձևավորում, սպառողական գործունեության կազմակերպում և այլն: Յուրաքանչյուր ընտանիք ունի իր միջոցները, ֆինանսները ինքնուրույն տնօրինելու իրավունք: Այս գործառույթը իրենից պահանջում է խնայողություն, վերահսկողություն, որին համապատասխան առաջնորդվում է ընտանիքում յուրաքանչյուր անդամ: Ընտանիքում կենցաղային պարտականությունների արդարացի բաշխումը ամուսինների, ավագ և երիտասարդ սերունդների միջև, որպես կանոն, նպաստում է

ամուսնական հարաբերությունների ամրապնդմանը և երեխաների աշխատանքային դաստիարակությանը: Ընտանեկան կյանքի այս կողմը հաճախ խոչընդոտներ և բախումներ է առաջացնում երիտասարդ ամուսինների հարաբերությունների շրջանում:

Սոցիալական գործառույթ. Սոցիալական գործառույթի կարևորագույն նախապայման է ապահովել անձի սոցիալականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը: Ընտանիքն է այն հիմնական առաջնային սոցիալական կառույցը, որտեղ տեղի է ունենում երեխայի սոցիալականացման գործընթացը, որի շնորհիվ երեխան ինտեգրվում է հասարակություն՝ որպես նրա լիիրավ անդամ: Այստեղ տեղի է ունենում երեխայի անձի ձևավորումն ու զարգացումը: Ծնողները պարտավորվում են ընտանիքում երեխաների համար ստեղծել անհրաժեշտ բարենպաստ պայմաններ՝ նրանց նորմալ ապրելու, զարգանալու, սովորելու և աշխատելու համար:

Դաստիարակչական գործառույթ. Ընտանիքի կարևորագույն գործառույթներից մեկը դաստիարակչական գործառույթն է, որը համարվում է մարդու լինելիության նախադրյալը: Ըստ Ն.Նյուկոմբի «Յուրաքանչյուր ընտանիք, յուրաքանչյուր ծնող իր երեխային դաստիարակում է յուրահատուկ անհատական մոտեցումներով… Դաստիարակման ընթացքի վրա շատ է ազդում ընտանիքի այս կամ այն մշակույթին պատկանելիությունը… Տվյալ հասարակության նորմերն ու արժեքները, սովորույթներն ու ծեսերը շատ մեծ դեր են խաղում երեխայի դաստիարակության գործում»[5] : Երեխայի դաստիարակությունը սկսվում է նրա լույս աշխարհ գալու պահից: Ռուս փիլիսոփա Վ.Սոլովյովն իրավացիորեն նշում է, որ «ընտանիքը մարդու դաստիարակչական օրորոցն է»:[6]

Ընտանիքն այն սոցիալական միջավայրն է, որտեղ սկսվում է երեխայի անձի ձևավորումը, սոցիալականացումը և համակողմանի դաստիարակությունը: Հետևաբար, երեխայի ծնողների վարքագծից, նրանց փոխհարաբերություններից, նրանց ներընտանեկան

---

[5] Н.Ньюкомб, Развитие личности ребенка, Санкт- Петербург, 2003, с. 394-396

[6] В.С. Торохтий, Технологии психолого-педагогического обеспечения социальной работы с семьей, в 2- ух томах: Учебное пособие, М., МГСУ, 2000

մթնոլորտից է կախված երեխայի դաստիարակությունը: Ծնողների ջերմ և հոգատար վերաբերմունքը խթանում է երեխայի մանկական անհատականության, զգացմունքայնության ու կամքի զարգացմանը: Ուստի անվիճելի է ծնողների դերը երեխայի դաստիարակության գործում: Ծնողը համարվել է և կհամարվի երեխայի դաստիարակության առաջնային օղակը: Նրանց ազդեցությունն ու անձնական օրինակը երեխայի ամբողջ կյանքում մնում է անփոխարինելի: Ընտանիք կազմելն ինքն ին մեծ պատասխանատվություն է: Ծնողներն իրենց գործունեությամբ պատասխանատու են ոչ միայն հասարակության, այլև իրենց երեխաների առջև:

4 Ընտանիքի դերը երեխայի անձի ձևավորման և զարգացման գործընթացներում

Ընտանիքում ապրող երեխան զգում է դրանում զգացմունքների և հարաբերությունների ողջ տիրույթը: Սա անջնջելի դրոշմ է թողնում նրա հոգու մեջ: Երեխան ընտանիքի միջոցով ուսումնասիրում է աշխարհը՝ ընտանեկան հարաբերությունների լույսի ներքո: Ապագա ծնողները պետք է մտածեն այն մասին, թե ինչպես լավագույն ձևով կազմակերպեն իրենց երեխայի դաստիարակությունը: Երեխայի դաստիարակության նպատակը՝ երեխայի համար երջանիկ, լիարժեք, ստեղծագործական, օգտակար կյանք ապահովելն է: Յուրաքանչյուր անձի ձևավորման, ֆիզիկական և մտավոր զարգացման գործընթացում ընտանիքը, ծնողներն ունեն անփոխարինելի դեր. այս միջավայրում է տեղի ունենում երեխայի առաջնային սոցիալականացումը, ձևավորվում են դերային և վարքագծային կարծրատիպեր, արժեքային կողմնորոշումներն ու աշխարհայացքը: Առաջին հերթին ընտանիքն է հոգ տանում երեխայի անվտանգության, կարիքների մասին, կրթում ու դաստիարակում նրան, հոգեբանական աջակցություն ու հարմարավետություն ապահովում: Հետևաբար բարդույթներից զերծ, հոգեբանորեն կայուն, հասարակության պահանջներն ընկալող և դրանց համարժեք արձագանքելու ունակ անձի ձևավորման առաջնային նախադրյալը բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ ու հոգեբանական կարողություններ ունեցող, դաստիարակչական և սոցիալականացման գործառույթներ իրականացնող, երեխայի իրավունքները, նրա հանդեպ պարտականությունները գիտակցող և դրանք կյանքի կոչող ընտանիքի առկայությունն է:

Երեխայի կյանքի առաջին տարում ծնողների հիմնական մտահոգությունը նրա

ֆիզիկական զարգացման համար նորմալ պայմանների ստեղծումն է, սանիտարահիգիենիկ նորմալ պայմանների ապահովումն է: Այս ժամանակահատվածում երեխան արդեն յուրովի է ներկայացնում իր կարիքները և արտահայտում իր ցանկությունները: Մեծահասակների խնդիրն է սովորել տարբերակել կարիքներն ու քմահաճույքները, քանի որ կարիքները պետք է բավարարվեն, իսկ քմահաճույքները պետք է ճնշվեն: Այսպիսով, ընտանիքում երեխան ստանում է իր առաջին բարոյական դասերը, որոնց բացակայության դեպքում նրա մեջ չի կարող ձևավորվել և զարգանալ բարոյական սովորությունների և արժեքների համակարգ: Կյանքի երկրորդ տարում երեխան սկսում է քայլել, ձգտում է իր ձեռքերով դիպչել ամեն ինչին, ձեռք բերել անհասանելին: Այս ժամանակահատվածում դաստիարակությունը պետք է հիմնված լինի երեխայի խելամիտ ընդգրկմանը տարբեր տեսակի գործունեության մեջ, ամեն ինչ պետք է ցուցադրվի, բացատրվի, սովորեցվի դիտել, խաղալ նրա հետ, պատմել և պատասխանել հարցերին: Սակայն եթե նրա գործողությունները գերազանցում են թույլատրելին, երեխան պետք է սովորի հասկանալ այն: Նախադպրոցական տարիքում երեխայի հիմնական գործունեությունը խաղն է: Երեխան կյանքից վերցնում է տարբեր իրավիճակներ խաղերի համար: Ընտանիքի դերը կայանում է նրանում, որ երեխային խաղի միջոցով փորձում է բացատրել և սովորեցնում է երեխային հասկանալ, թե ինչն է լավ և ինչը վատ, բարոյական որ հատկանիշներն են գնահատվում և հարգվում հասարակության մեջ, և ինչն է դատապարտվում: Դպրոցական տարիքում երեխայի հանդեպ պահանջվում է կենտրոնացում, համառություն և աշխատասիրություն: Ուստի կարևոր է, նույնիսկ նախադպրոցական տարիքում, երեխային սովորեցնել հանգամանորեն կատարել առաջադրանքները, ցուցաբերել համառություն և ավարտին հասցնել ցանկացած աշխատանք կամ խաղ: Ընտանիքը կարևոր դեր ունի երեխայի աշխատանքային դաստիարակության ձևավորման և զարգացման մեջ: Երեխաները անմիջականորեն ներգրավված են լինում նաև տնային աշխատանքի մեջ, սովորում են կատարել իրենց աշխատանքային պարտականությունները՝ օգնել իրենց հորը և մորը: Ընտանիքում երեխայի լիարժեք սոցիալականացման համար ծնողները որպես նպատակ պետք է համարեն՝.

- Մեծացնել առողջ և երջանիկ երեխաներ: Դրա համար անհրաժեշտ է անել ամեն ինչ, որպեսզի երեխան միշտ շրջապատված լինի հավատարիմ ընկերներով, վայելի շրջապատի սերն ու հարգանքը, ձեռք բերի մասնագիտական կրթություն:
- Երեխային մեծացնել այնպես, որ նա հստակ պատկերացնի, թե ինչ է ուզում: Դրա

լավագույն տարբերակը երեխայի հետ քայլելն է: Երեխաները պետք է զգան, որ ծնողը հետևում է իր ձեռքբերումների ընթացքին: Այդ դեպքում երեխան անպայման կձգտի արդարացնել ծնողի սպասելիքները:

- Դաստիարակել շփվող և հաղորդակցվող երեխա, քանի որ երեխան իր ամբողջ կյանքում կարող է հայտնվել տարբեր միջավայրերում և շփվել տարբեր մարդկանց հետ:

Ծնողները մշտապես պետք է հիշեն իրենց երեխաների ճակատագրի հանդեպ, հասարակության առջև իրենց մեծ պատասխանատվության մասին: Ահա թե ինչու նրանք պետք է առավելագույն չափով նախապատրաստվեն երեխաների դաստիարակությանը, ուսումնասիրեն անհրաժեշտ գրականություն և ընտանեկան դաստիարակության լավագույն փորձը: Քանի որ դաստիարակությունն իրականացվում է ոչ միայն ընտանիքի կրտսեր անդամներին ուղղված պահանջներով, բանավոր ներգործություններով, նրանց ապրելակերպի կազմակերպմամբ, այլև անձնական օրինակով, ապա բնականաբար հենց ծնողներին է անհրաժեշտ կատարելագործվել և դաստիարակվել:

Այսպիսով, մենք կարող ենք եզրակացնել, որ ընտանիքը երեխայի առաջին հաղորդակցման դպրոցն է, այլ կերպ ասած՝ երեխայի սոցիալականացման գործընթացի առաջնային կառույցն է: Ընտանիքում երեխան սովորում է հարգել մեծերին, հոգ տանել տարեցների և հիվանդների մասին և միմյանց նկատմամբ ցուցաբերել հնարավոր բոլոր օգնությունները: Այսինքն, հենց ընտանքիում է ձեռք բերվում բնավորության հիմնական գծերը, ըստ որի մարդն ինտեգրվում է հասարակություն:

5 Ընտանեկան կոնֆլիկտների տեսակները և դրանց առաջացման պատճառները

Ընտանիքում առաջացած ցանկացած կոնֆլիկտ կարող է անվերադարձ բացասական հետք թողնել երեխայի անձի ձևավորման և զարգացման գործում: Հետևաբար, ընտանիքում ինչպես կնոջից, այնպես էլ ամուսնուց պահանջվում է ունենալ երեխաների հանդեպ մեծ պատասխանատվություն:

Կենցաղն ամենամեծ փորձությունն է երիտասարդ ամուսինների համար: Միմյանց լրիվ բացահայտումը երկրորդ ծանր քննությունն է նորապսակների համար, իսկ երրորդը՝ դերերի, պարտականությունների բաշխումն է: Աստիճանաբար նրբազգացությունը, քնքշությունը, հաճոյախոսությունները, երախտագիտության արտահայտությունները պակասում են՝ տեղ

տալով փոխադարձ քննադատություններին: Հաճախ զուգընկերները դառնում են պակաս ուշադիր միմյանց նկատմամբ և ավելի էգոիստ, քան առաջ: Սառած զգացմունքները կարող են բազմաթիվ ընտանեկան կոնֆլիկտներ ստեղծել: Ընտանիքում ամուսնական զույգերի միջև համատեղելիության բացակայության դեպքում նույնպես կարող են ի հայտ գալ բազմաթիվ կոնֆլիկտներ: Գոյություն ունեն նաև այնպիսի ընտանիքներ, որտեղ բավականին բարձր է կոնֆլիկտայնության աստիճանը, խաթարված է ընտանիքի անդորրը, միջանձնային հարաբերություններում առկա է լարվածություն:

Կապված ընտանիքում առաջացած կոնֆլիկտների բնույթից, հաճախականությունից, խորությունից և սրությունից՝ տարբերում ենք պրոբլեմային, նևրոտիկ, ճգնաժամային և կոնֆլիկտային ընտանիքներ:[7]

Պրոբլեմային ընտանիք. Պրոբլեմային ընտանիքներում առկա խնդիրների, կյանքի ծանր պայմանների արդյունքում ընտանիքը հայտնվում է անկայուն վիճակում: Այս տեսակի ընտանիքին բնորոշ է դժվարությունների տևական գոյությունը, որն ընդունակ է զգալի հարված հասցնել ամուսնության կայունությանը: Օրինակ, բնակարանի բացակայությունը, ամուսիններից մեկի երկարատև հիվանդությունը, ընտանիքը պահելու միջոցների բացակայությունը, հանցագործության համար երկարատև ժամանակով դատապարտվելը և մի շարք այլ խնդիրներ:

Նևրոտիկ ընտանիք. Այստեղ հիմնական դեր են խաղում այն գործոնների կուտակումը, որոնք հանգեցնում են հոգեբանական դժվարությունների: Ամուսինների մոտ նկատվում է բարձր տագնապայնություն, քնի խանգարում, ցանկացած առիթով հուզական դրսևորումներ, բարձր ագրեսիվություն և այլն: Այսպիսի ընտանիքներում ամուսինների կոնֆլիկտային վարքը կարող է դրսևորվել գաղտնի, քողարկված և բաց ակնհայտ ձևերով. ցուցադրական-դեմոնստրատիվ լռելը, կտրուկ շարժումը (ժեստ), անհամաձայնություն նշանակող հայացքը, հարաբերություններում ընդգծված, շեշտված սառնությունը և բացահայտ խոսակցությունը՝ տարբեր ձևերով ու դրսևորումներով:

[7] П.Ф. Каптеров, О семейном воспитании. Учебн. пособие для студ. Высш. и сред. пед. учеб. заведений. – М., Академия, 2002, 400 с.

Գծապատկեր 3.



Ճգնաժամային ընտանիք. Այս տեսակի ընտանիքներում անդամների հետաքրքրությունների և պահանջմունքների հակադրությունները կրում են սուր արտահայտված բնույթ՝ ներառելով ընտանիքի կենսագործունեության կարևորագույն ոլորտը: Այստեղ ամուսինները զբաղեցնում են անհանդուրժողական, աններողամիտ և նույնիսկ թշնամական դիրք մեկը մյուսի նկատմամբ, հաշվի չեն առնում միմյանց հետաքրքրությունները և հակված չեն փոխզիջման: Ճգնաժամային ամուսնական միությունների թվին կարելի է դասել նաև այն ընտանիքները, որոնք քայքայվում են, կամ գտնվում են փլուզման եզրին:

Մ.Պլզակը և Ս.Կրատոխվիլը ամուսինների փոխհարաբերություններում առանձնացնում են ճգնաժամային երկու իրադրություն.

1. *Առաջին ճգնաժամային իրադրությունը* վրա է հասնում ամուսնական կյանքի երրորդից-յոթերորդ տարիների միջև ընկած ժամանակահատվածում: Ճգնաժամի առաջացմանը նպաստում են հետևյալ գործոնները՝ ռոմանտիկ տրամադրությունների անհետացումը, սիրահարվածության փուլի և հետագա կյանքում ամուսնու վարքի մեծ տարբերությունը, ամենատարբեր խնդիրների վերաբերյալ տարբեր հայացքների և տեսակետների առաջ գալը, ամուսինների փոխհարաբերություններում բացասական հույզերի գերակշռությունը, հայացքների և վարքի բախումները, մշտական հոգեբանական լարվածությունը և այլն:

2.*Ճգնաժամային երկրորդ շրջանը* վրա է հասնում համատեղ ամուսնական կյանքի 17–րդ և 25–րդ տարիների միջև ընկած ժամանակահատվածում: Այն, ըստ այդ հեղինակների, ավելի մակերեսային բնույթ ունի, քան նախորդը: Այդ ճգնաժամը սկսվում է մոտավոր այն ժամանակ, երբ ամուսինները սկսում են զգալ, որ ծերանում են և տագնապներ ու վախեր են ունենում, նրանց մոտ հիվանդությունների ախտանշաններ են ի հայտ գալիս: Երեխաների հեռանալու հետ միասին առաջ են գալիս նաև տագնապալից վիճակներ, մենակության և լքվածության զգացում: Կինը հատկապես ավելի հաճախ է անհանգստություն զգում իր ծերացման և արտաքին տեսքի վատացման կապակցությամբ: Երբեմն ծերացող կինն սկսում է անհանգստանալ, որ ամուսինը կարող է արտամուսնական սեռական կապերի մեջ մտնել այլ կանանց հետ:[8]

Ընտանեկան կոնֆլիկտներն ունենում են ճգնաժամային հետևյալ տեսակները. *պարզ ճգնաժամ*, *բարդ համալիր ճգնաժամ*: Այսպիսով, կարելի է ասել, որ ընտանեկան ճգնաժամ առկա է այն դեպքում, երբ ընտանիքի անդամների միջև գոյություն ունեցող հակասություններն ու անհամաձայնությունները՝ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ, գիտակցված կամ չգիտակցված, անհատական կամ հասարակական գործոնների ազդեցությամբ, ընդունում են կոնֆլիկտների բնույթ:

Կոնֆլիկտային ընտանիք. Այս ընտանիքներում ամուսինների միջև առկա են մշտական ոլորտներ, որոնցում իրենց հետաքրքրությունները բախվում են՝ առաջ բերելով ուժեղ և շարունակական բացասական հուզական վիճակներ:

Ընտանեկան կոնֆլիկտները ընտանիքի անդամների միջև առճակատում է, որը հիմնված է հակադիր դրդապատճառների և հայացքների բախման վրա: Երեխայի համար ընտանիքը ամենամոտ սոցիալական շրջանակն է, որում ձևավորվում են նրա հոգեբանությունն ու հարաբերությունները արտաքին աշխարհի հետ: Ծնողների ազդեցությունը երեխաների վրա, անկասկած, բազմաբնույթ է: Ընտանիքում, ինչպես ցանկացած այլ սոցիալական ինստիտուտում, տեղի են ունենում բախումներ:

[8] http://www.surbzoravor.am/post/view/och-liar%D5%AAeq-yntaniqi-azdecutyuny-erekhayi-andzi-dzevavorman-vra

Տարբերում ենք ընտանեկան կոնֆլիկտների հետևյալ տեսակներ՝ կոնֆլիկտ ամուսնական զույգի միջև, կոնֆլիկտ ծնող–երեխա հարաբերություններում, կոնֆլիկտ երեխա-երեխա հարաբերություններում, կոնֆլիկտ ընտանիքի այլ անդամների հետ:

1. Կոնֆլիկտ ամուսնական զույգի միջև. Կին-տղամարդ հարաբերություններում կոնֆլիկտի պատճառ կարող են լինել հոգեբանական անհամատեղելիությունը, զույգերից մեկի ծանր բնավորությունը, սեռական անբավարարվածությունը, դավաճանությունը, աշխարհընկալման և արժեհամակարգի անհամապատասխանությունը, կնոջ անկարողությունը՝ լուծելու կենցաղային հարցերը, ֆինանսական խնդիրները և այլն: Ծնողների միջև ծագած կոնֆլիկտի արդյունքում երեխան կարող է ունենալ մեղքի զգացում՝ կարծելով, որ ինքն է հանդիսացել կոնֆլիկտի պատճառ: Որոշ դեպքերում էլ երեխայի մեջ կարող է առաջանալ վախի զգացում: Սա նկատվում է հատկապես այն ժամանակ, երբ երեխան ականատես է լինում ծնողների վեճին կամ բռնության տեսարանների: Այսպիսի երեխաներն ապրում են մեղքի, վախի զգացումով, լինում մեկուսացված ու անհանգիստ, նաև կարող են ունենալ նյարդային, հոգեսոմատիկ և այլ հիվանդություններ:

Գծապատկեր 4Ժ



2. Կոնֆլիկտ ծնող–երեխա հարաբերություններում. Ընտանիքում ծնողը կարող է կոնֆլիկտներ ունենալ տարբեր տարիքի երեխաների հետ: Պատճառը՝ ծնողի կողմից երեխայի տարիքային

և հոգեբանական առանձնահատկությունները չգիտակցելն է, դաստիարակության ձևերին չտիրապետելը, երեխայի մտադրությունները չհասկանալը, նրան մշտապես փոքր և անկարող մարդ համարելը: Մի տարիքային փուլից մյուսին անցումն ուղեկցվում է ճգնաժամով, որը միշտ չէ, որ սահուն է ընթանում: Ճգնաժամը կարող է լարվածություն առաջացնել հարաբերություններում՝ հատկապես երեք տարեկանում և դեռահասության տարիքում: Երեք տարեկան երեխայի ճգնաժամի պատճառը գոյություն ունեցող հակասությունն է երեխայի պահանջմունքների և դրանց բավարարման միջև: Երեխաներն այս շրջանում դառնում են կամակոր, համառ: Մեծ թվով կոնֆլիկտներ են առաջանում դեռահասության տարիքում, ինչը պայմանավորված է դեռահասների հոգեբանական, ֆիզիկական և սեռական կյանքում տեղի ունեցող փոփոխություններով: Այս տարիքային փուլում հաճախ է առաջանում «հայրեր և որդիներ» խնդիրը: Մի դեպքում դեռահասն սկսում է համեմատել իդեալական ծնողի իր պատկերացումներն իրական ծնողների հետ և տեսնում է, որ հսկայական տարբերություն կա իդեալական և իրական ծնողների միջև: Մյուս դեպքում դեռահասը, որի մոտ սկսվել է ֆիզիկական բուռն զարգացման և սեռական հասունացման գործընթաց, սկսում է իրեն մեծ համարել և բոլորից պահանջել, որ իրեն վերաբերվեն ինչպես մեծի: Բոլոր դեռահասները, առանց բացառության, ունեն այդ ձգտումը: Այն ծնողները, որոնք շարունակում են դեռահասին վերաբերվել փոքր երեխայի նման, ունենում են լուրջ խնդիրներ: Ծայրահեղ դեպքերում ծնող-երեխա լարված և կոնֆլիկտային հարաբերությունները հանգեցնում են նյարդայնության, ընկճախտի, բռնության դրսևորումների: Ծնող-երեխա փոխհարաբերություններում կոնֆլիկտներ են առաջանում նաև սխալ դաստիարակության պատճառով: Ծնողը հաճախ ձգտում է իր երեխային դարձնել օրինակելի, անթերի՝ կիրառելով խիստ պատժամիջոցներ, կոպիտ վարվելով, քիչ խրախուսելով, երբեմն էլ դաժան վերաբերմունք դրսևորելով: Ոչ տեղին պատիժը, ծնողի կոպտությունը, դաժանությունը երեխայի մեջ հանգեցնում են երկու ծայրահեղ դրսևորումների. առաջին դեպքում երեխան մեծանում է չարացած, ագրեսիվ, երկրորդ դեպքում՝ անվստահ, բարդույթավորված:

3. Կոնֆլիկտ երեխա-երեխա հարաբերություններում. Ընտանիքում բացի ծնողների և երեխաների միջև առաջացած բախումների՝ կարող են առաջանալ նաև կանֆլիկտներ երեխաների միջև: Երեխա-երեխա հարաբերություններում կոնֆլիկտի առաջացման պատճառները մի քանիսն են: Առաջին պատճառը երեխայի հանդեպ ուշադրության

պակասն է: Որպես կանոն՝ ընտանիքում երկրորդ երեխայի ծնունդն առաջնեկի մեջ առաջացնում է մերժված, անտեսված լինելու զգացողություն, ինչն էլ կարող է վերածվել ատելության ինչպես ծնողի, այնպես էլ քրոջ կամ եղբոր նկատմամբ: Երկրորդ երեխայի ծնվելուց հետո ծնողներն առավել ուշադիր պետք է լինեն առաջնեկի նկատմամբ, նրա մեջ ձևավորեն դրական վերաբերմունք նորածնի նկատմամբ: Միայն ծնողից է կախված երեխա-երեխա հարաբերությունների բնույթը: Երեխա-երեխա փոխհարաբերություններում կոնֆլիկտի առաջացման երկրորդ պատճառը ծնողի կողմից երեխաների միջև սեռային խտրություն դնելն է: Հաճախ ընտանիքներում ընդունելի է տղա և աղջիկ երեխաներին բաժանել ծնողների միջև:

4. Կոնֆլիկտ ընտանիքի այլ անդամների հետ. Կոնֆլիկտներ են առաջանում նաև ընտանիքի այլ անդամների միջև, երբ առաջ է գալիս նյութական բարեկեցության, ժառանգության հարցը:[9] Ընտանիքում ժամանակի ընթացքում ի հայտ են գալիս ընտանիքի անդամների միջև հակասություններ: Ելնելով հակասության պատճառներից ընտանեկան կոնֆլիկտները կարելի է բաժանել հետևյալ տեսակների՝ տնտեսական, գաղափարական, սոցիալ-կենցաղային, սոցիալ-հոգեբանական, էմոցիոնալ-նևրոգեն, գաղափարական կոնֆլիկտներ:

1. **Տնտեսական կոնֆլիկտներ.** Այս կոնֆլիկտների առաջացման հիմքում ընկած է տնտեսական հակասությունների բախումը. երբ ընտանիքի անդամներից մի կողմի պահանջների բավարարումը իրականացվում է մյուսի հաշվին:
2. **Գաղափարական կոնֆլիկտներ.** Այս կոնֆլիկտների հիմքում ընկած են ընտանիքի անդամների հայացքների, դիրքորոշումների համար առկա հակասությունները՝ կապված կյանքի հակասական, կոլեկտիվի տարբեր հարցերի հետ:
3. **Սոցիալ-կենցաղային կոնֆլիկտներ**. Այս տեսակի կոնֆլիկտի հիմքում ընկած են ընտանիքում առանձին մարդկանց միջև առկա հակասությունները՝ կապված ապրուստի, կենցաղային ծառայությունների, պարտականությունների բաժանման, սոցիալ-կենցաղային ծառայությունների հերթականության հաստատման և այլ հարցերի հետ:

[9] http://gspi.am/media/journal/2014n1b/24.pdf

4. **Սոցիալ-հոգեբանական կոնֆլիկտներ**. Կոնֆլիկտների այս տեսակը ի հայտ է գալիս ընտանիքում առանձին մարդկանց միջև հարաբերություններում, որի առաջացման պատճառն է՝ հարաբերությունների խախտու մը,հոգեբանական առանձնահատկությունների անհամապատասխանությունը, այսինքն՝ մի մարդու կողմից՝ մյուսին չընդունելը, դիմացինի մոտ կամ միաժամանակ երկուսի մոտ էլ բացասական զգացմունքների հոգևիճակի առաջացումը:

5. **Էմոցիոնալ-նևրոգեն կոնֆլիկտներ**. Այս կոնֆլիկտների հիմքում ընկած է ընտանիքի անդամների մոտ ոչ թե ինչ-որ հետաքրքրությունների բախումը, այլ էմոցիոնալ վիճակը, որն առաջացնում է ծանրաբեռնված վիճակ: Նման կոնֆլիկտների առաջացման պատճառը առողջական վիճակն է և հատկապես մարդկանց նյարդային համակարգը: Դրանք կարող են լինել նևրոզներ, նեղված վիճակներ, պաթոլոգիական հակումներ՝ ալկոհոլը, թմրանյութերը և այլն:

6. **Մանկավարժական կոնֆլիկտներ**. Կոնֆլիկտների այս տեսակի հիմքում ընկած են այն հակասությունները, որոնք առաջանում են ընտանիքում ուսումնադաստիարակչական գործընթացում ծնողների և երեխաների հետաքրքրությունների, պահանջմունքների բախման հետևանքով: Այս կոնֆլիկտների համար անհրաժեշտ է սուբյեկտների փոխազդեծության համար հարաբերություններում հասնել ներդաշնակությանը: Ընտանեկան կոնֆլիկտների մեկ այլ հիմնական պատճառը ամուսինների անզիջողականությունն է: Ընտանեկան կոնֆլիկտների արդյունքում առաջին հերթին տուժում են երեխաները, որոնք ունենում են անձնային զարգացման խեղաթյուրումներ և վարքի խանգարումներ: Ավելին, երեխայի վրա ազդեցությունը չի արտահայտվում բացահայտ ինչպես ասոցիալ վարք ունեցող ընտանիքների իրավիճակներում, այլ՝ անուղղակիորեն: Ընտանեկան կոնֆլիկտները կարող են շատ տարբեր հետևանքներ թողնել ընտանիքի վրա: Ամենատարածվածը կոնֆլիկտների հետևանքով՝ ամուսնական զույգերի բաժանումն է: Ամուսնալուծության պատճառ կարող է լինել հաղորդակցման կուլտուրայի, փոխադարձ վստահության, քաղաքավարության, ուշադրության, բարյացակամության, նրբազգացության բացակայությունը ինչպես նաև կենցաղային խնդիրները:

6 Ընտանեկան կոնֆլիկտների բացասական հետևանքները

Երեխան ամենավաղ մանկությունից ընկալում է ծնողների ապրելակերպը, նրանց միջև տիրող հարաբերությունները: Ընտանիքի բարոյահոգեբանական մթնոլորտը մեծ ազդեցություն ունի երեխայի բարոյական զգացմունքների ձևավորման վրա: Երբ ծնողների միջև հաստատվում են ջերմ, բարիդրացիական հարաբերություններ, երեխան իրեն երջանիկ է զգում: Հարկ է նշել, որ որոշ երեխաների համար էլ կոնֆլիկտը դառնում է սովորական մի երևույթ: Հետագայում՝ հասուն տարիքում, նրանք այդ նույն անտարբերությունը դրսևորում են շրջապատող մարդկանց, երևույթների նկատմամբ, դառնում են սառնասիրտ, ունենում ապրումակցման ցածր մակարդակ: Այս երեխաների ծնողները, տարված լինելով հարաբերություններ պարզելով, չեն նկատում, որ իրենց երեխան ձեռք է բերում բնավորության բացասական գծեր, կատարում անընդունելի արարքներ, դրսևորում հակասոցիալական վարքագիծ:

Ամուսնալուծության հետևանքը նույնպես իր ազդեցությունն է թողնում երեխայի սոցիալականացման վրա: Ավելի ուժեղ է այն ազդում հատկապես տղաների վրա, քան աղջիկների: Նրանք դառնում են անկառավարելի, ագրեսիվ, ցուցաբերում են անինքնուրույնություն և տագնապ: Նրանց վարքը թե դպրոցում, և թե տանը ավելի ինֆանտիլ բնույթ է կրում, քան լիարժեք ընտանիքներից դուրս եկած դեռահասինը: Ընտանիքի փլուզումը բացասաբար է ազդում ոչ միայն ամուսինների հարաբերությունների, այլև իր հետքն է թողնում ծնող-երեխա հարաբերությունների վրա: Ընտանիքում կոնֆլիկտների առկայության դեպքում երեխան զգում է հոգեբանական դիսկոմֆորտ, սակայն չի տեսնում պատճառը, և թե ինչպիսի միջոցներով է հնարավոր խուսափել դրանցից:

Հաճախ ընտանեկան կոնֆլիկտները մեծ դեր են խաղումնաև երեխայի առողջության վրա: Ընտանեկան բախումների և վեճերի հետևանքով երեխան կարող է ձեռք բերել տարբեր հիվանդություններ. նա սկսում է կակազել, միզել, ունենալ ուժեղ գլխացավեր: Որոշ դեպքերում, երբ երեխան զգում է, որ իր անհաջողությունները շատ են տխրեցնում և անհանգստացնում ծնողներին, որի հետևանքով կոնֆլիկտներ են առաջանում երեխայի և ծնողի կամ ամուսինների միջև, նա սկսում է շատ ջանքեր գործադրել, որպեսզի դա այլևս չկրկնվի: Այդ պատճառով երեխայի մոտ առաջացած գերբարձր պատասխանատվությունը կարող է բերել նրա գերլարվածությանը, քանի որ երբ հաջողության հասնելու ձգտումը շատ

մեծ է, այն կարող է առաջացնել հոգեբանական ճնշվածություն, որն արդեն լրացուցիչ խոչընդոտ է: Չլուծված միջամուսնական պրոբլեմները, կոնֆլիկտները, որոնք թեև թաքնված են, սակայն դրանք նույնպես ազդում են երեխայի սոցիալականցման վրա: Առաջին հայացքից թվում է, թե այս տեսակի կոնֆլիկտներն ազդեցություն չունեն երեխայի հոգեկան զարգացման վրա, սակայն, երբ երեխան ականատես է լինում, թե ինչպես են ծնողները վիճաբանում, վիրավորում, վարկաբեկում մեկը մյուսին, փոխվում է նաև նրա հոգեվիճակը: Կոնֆլիկտային իրադրությունը երեխային դարձնում է սառնասիրտ, չշփվող, դաժան, անուշադիր, ագրեսիվ, կոպիտ կամ էլ անվստահ, ինքնամփոփ, ընկճված ու անտարբեր:

Այն ընտանիքներում, որտեղ անընդհատ տիրում է կոնֆլիկտային իրավիճակ, որի հետևանքով էլ երեխաները չեն ստանում բավարար ջերմություն, սեր ու հոգատարություն, այդ երեխաները ձեռք են բերում նվաստացման զգացումներ, ենթարկվում են բռնության, սկսում են սեփական ձևով ինքնուրույն պաշտպանել իրենց իրավունքները, որոնք հաճախ անօրինական են լինում: Այս ամենն արտահայտվում է երեխաների վարքագծում, որոնք վտանգավոր են դառնում թե նրանց առողջ սոցիաականացման համար, և թե ողջ հասարակության համար: Այս երեխաներին պայմանականորեն կարելի է բաժանել մի քանի խմբերի, որոնցից յուրաքանչյուրն առանձին-առանձին ունի իր առանձնահատկություններն ու բնորոշ գծերը, որոնք հետևանք են հանդիսանում ընտանիքում տիրող միջանձնային ոչ նորմալ հարաբերությունների:

1. Երեխաները դառնում են կամակոր, չենթարկվող, փորձում են ազատվել ծնողի հովանավորությունից, որի հետևանքով սրվում են հարաբերությունները, դրսևորում են վարքի շեղումներ, հակվածություն ալկոհոլի և թմրանյութերի նկատմամբ:

2. Մելամաղձոտ են, առանց պատճառի ունենում են անկումային տրամադրություն, չեն ընդունում ծնողի դիտողությունները:

3. Մի մասին էլ բնորոշ է բացահայտ չարությունն ու ծաղրանքը ոչ միայն հասակակիցների, այլև՝ ծնողների նկատմամբ: Նրանք նույնպես հաճախ սիրում են օգտագործել ալկոհոլ, թմրանյութ: Ներընտանեկան և միջանձնային լարված հարաբերությունները նպաստում են նաև հանցագործությունների և մարմնավաճառության թվի աճին:

4. Մյուս խումբը հեշտությամբ է ընկնում շրջապատի ազդեցության տակ, ծնողին դիտում է

որպես սեփական պահանջմունքները բավարարող օբյեկտ, չի ցուցաբերում ո՛չ սեր, ո՛չ հարգանք մեծերի նկատմամբ: Այս խմբին հետաքրքրում է հիմնականում փողոցային կյանքը (ավտոմեքենայի առևանգում, գողություն և այլն), ալկոհոլը, թմրանյութերը, ինչով էլ նաև կարող է պայմանավորված լինել նրանց փախուստը տնից:

Ընդհանրացնելով այս ամենը՝ կարող ենք ասել, որ ընտանիքի անառողջ մթնոլորտը, ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները միանշանակ բացասական ազդեցություն են թողնում երեխայի վրա: Երեխան, որը մշտապես գտնվում է լարված, սթրեսային վիճակում, ունենում բնավորություն, չի կարողանում կապեր հաստատել հասակակիցների և մեծահասակների հետ, ունենում է ոչ ադեկվատ, ցածր ինքնագնահատական:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով ընտանիքի հոգեբանությունը, կոնֆլիկտների բացասական հետևանքները երեխաների սոցիալականացման գործընթացում՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին՝.

1. Ընտանիքն այն հիմնական և առաջնային միկրոմիջավայրն է, որը երեխայի սոցիալականացման գործընթացում կատարում է հիմնական, երկարաժամկետ և կարևորագույն դեր, որի նպատակն է աճող սերնդի առողջ և արդյունավետ սոցիալականացման ապահովումը, ինչպես նաև ինտեգրումը հասարակություն՝ որպես հասարակության լիարժեք անդամ:
2. Ժամանակակից ընտանիքն ապրում է աստիճանական զարգացման բարդ փուլ՝ փոխվում են ընտանեկան փոխհարաբերությունները՝ հանգեցնելով նաև ընտանիքի կառուցվածքային և գործառութային փոփոխությունների:
3. Ընտանեկան կոնֆլիկտները հիմնականում առաջանում են մարդկանց համատեղ կյանքի արդյունքում, որոնք գտնվում են իրենց կյանքի տարբեր փուլերում և ունեն տարբեր կարծիքներ, պահանջմունքներ ու ձգտումներ, որոնցից խուսափելու համար անհրաժեշտ է հստակեցնել ընտանիքի անդամներից յուրաքանչյուրի դերը, նրա իրավունքներն ու պարտականությունները:
4. Ընտանեկան փոխհարաբերություններում տիրող փոխադարձ անհանդուրժողականությունը, տարաձայնություններն ու անվստահությունը առաջացնում են բախումնային բարդ իրավիճակներ, որոնք քայքայիչ ազդեցություն են ունենում երեխայի սոցիալականացման վրա:
5. Հաճախակի կոնֆլիկտներն ազդում են ընտանիքի հոգեբանական մթնոլորտի վրա, քայքայում ներընտանեկան հարաբերությունները, ընտանիքի անդամների մոտ առաջացնում սթրես, լարվածություն, տհաճ հոգևիճակներ:
6. Ընտանեկան կոնֆլիկտները առաջին հերթին ազդում են երեխաների հոգեբանության ինչպես նաև անձնական հարաբերությունների կառուցման վրա՝ ստեղծելով նրանց մոտ անձնային զարգացման խեղաթյուրումներ և վարքի խանգարումներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա.Հ. Սարգսյան, Մշակույթի տեսություն, Երևան, 2003, էջ 29
2. Վ.Խ Միրզոյան, Ընտանեկան կոնֆլիկտների տեսակները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ձևավորման վրա, Երևան, 2014, էջ 45
3. П.Ф. Каптеров, О семейном воспитании. Учебн. пособие для студ. Высш. и сред. пед. учеб. заведений. – М., Академия, 2002, 400 с.
4. С. Д. Лаптенок, Мораль и семья. Минск, 1967
5. Н.Ньюкомб, Развитие личности ребенка, Санкт- Петербург, 2003, с. 394-396
6. В.С. Торохтий, Технологии психолого-педагогического обеспечения социальной работы с семьей, в 2- ух томах: Учебное пособие, М., МГСУ, 2000
7. http://www.surbzoravor.am/post/view/och-liar%D5%AAeq-yntaniqi-azdecutyuny-erekhayi-andzi-dzevavorman-vra
8. https://www.doctors.am/yntaniqi-tesaknery
9. http://gspi.am/media/journal/2014n1b/24.pdf